Գևորգ Էմին

Քո ձեռքերը

Ես սիրո՞ւմ եմ քո ձեռքերը
Որոնք, արդեն քանի՞ տարի,
Ինձ ամենի'ց ամուր գրկում,
Սակայն երբեք չե'ն... բանտարկում.
Ինձ աշխարհի տե'ղը անում,
Սակայն երբեք չեն տիրանում.
Օղակի պես շուրջս պրկվում,
Բայց չե՞ն խեղդում,
այլ՝ լոկ փրկո՞ւմ,
Ինչպես փրկում են խեղդվողի'ն...
Քո ձեռքե'ղը,-
Նո՞ւրբ,
Ասողի՞կ,
ՈՒ երգեցի՞կ,
Որոնց ափում,
Ես՝ չո՞ր խեցի,
Մարգարի՞տ եմ քիչ-քիչ դառնում...
Ես սիրում եմ քո ձեռքերը...
"Մարգարի'տ եմ քիչ-քիչ դառնում..."-
Իսկ Մարգարիտն այս աշխարհում
Ինչքան էլ թա՞նկ լինի, անգի'ն,
Ինչքան չքնա՞ղ ու եզակի՞,-
Երբեք պիտի չխնայե՞ս

Եվ... միշտ... կրցք'իդ վրա' պահես,-
Թե չէ, քո ջե՛րմ կրծքից հեռու,
(Քո սիրո'ւց ու կրծքից հեռո'ւ),
Իսկույն խամրո՛ւմ է, դալկանո՛ւմ,-
Կրկին դարձած... նույն չոր խեցի՛ն...

Իմ սիրելի՛,
Իմ ասողի՛կ,
Իմ գեղեցի՛կ...

Զգո՛ւյշ խոսիր Հայաստանում,-
Այստեղ ամեն գագաթ ու ձոր,
Արձագա'նք է տալիս հզոր
Եվ քո խոսքը հեռո՛ւ տանում...

Թե բարի են խոսքերը քո,
Հայոց լեռներն ակնածանքով
Կխոնարվե՛ն քո դեմ լռին՝
Բաշը քսած քո ձեռքերին:

Իսկ թե չար են՝ լեռները մեր,
Հրաբխի բնե'րն անմեռ,
Որ լռել են, բայց չե'ն հանգել,
Քեզ լավայո'վ կարձագանքեն,
Որ լեռնե'ր է քշում-տանում...

Զգո՛ւյշ խոսիր Հայաստանում...

Զգո՛ւյշ քայլիր Հայաստանում,-
Ն՝ե՛ղ են ճամփեքը լեռնական,
Երկու հոգու տեղ չեն անում,
Թե դեմ-դիմաց ելնեն հանկարծ.
Թե բարեկամ ես ու ընկեր,

Ա՛նց կկենաք իրար գրկած,
Թե դավով ես այստեղ ընկել,
Կգլորվես ժայռերից ցած.
Ո՞վ եղավ քո գալու վկան,
Գնալդ ո՞վ է իմանում...

Նեղ են ճամփեքը լեռնական,

Զգո՛ւյշ քայլիր Հայաստանում:
Զգո՛ւյշ գործիր Հայաստանում,-

Մենք գահ ու թագ չե՝նք ունեցել,
Եվ... արքա՝ է ամեն մի հայ,
Զորք ու բանակ չենք ունեցել,
Եվ... սպա է ամեն մի հայ.

Ամեն մի հայ՝ լեռան մի ծերպ,
Ամեն մի հայ՝ ուրույն մի կերպ,
Ամեն մի հայ՝ մի Հայաստան
Բաժան-բաժան,
Անմիաբան,
Զատվա՛ծ, հատվա՛ծ,
Եվ սակայն՝ մի՝
Երբ սպառնում է թշնամին
Մեր դարավոր անմահ երթին
Եվ այս ժայռին թառած բերդին,
Որ Հայրենիք ենք անվանում...

Զգո՛ւյշ գորցիր Հայաստանում: